

ԳԱԲՐԻԷԼ ԼԱԶԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԴԱՏԸ

Հայկոսս յարաբերույթիւններու լոյսին տակ

ԳՄԴ 63.3(2Հ)
Լ 133

Ֆ 0503020913
734 (01) 91

ISSN 5-8079-0258-0

© «Ադանա» հրատարակչություն. 1991

ԳԱԲՐԻԷԼ ԼԱԶԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԴԱՏԸ

Հայկուս յարաբերութիւններու լոյսին տակ

Երևան «Աղանա» 1991

Այս գրքի վերահրատարակումը հայրենիքում հարգանքի տուրքի մեր համեստ բաժինն է 1918-ի Մայիսի 28-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետության 78-րդ տարելիցին:

ԵՄՀ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ЕГУ

170.13.7



1941ին լույս ընծայեցին «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏՆԸ ըստ դաշնագրերու», իսկ 1946ին՝ «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏՆԸ — վաւերագրեր»։ Ինչպէս նախորդները, նաեւ ներկայ գիրքը ամբողջութիւն մը կը կազմէ, ոչ թէ շարունակութիւնն է նոյն նիւթին։ Այս անգամ ենթախորագիր դրինք «Հայերու յարաբերութիւններու լուսին տակ»։

Հարաւի հետ մեր ունեցած արիւնտ պայտարին ծանօթ է ամբողջ աշխարհի եւ ռուս հետեւանքով Հայաստան եւ հայ ժողովուրդ նկատուած են Ռուսաստանի տրբանակ։ Այսպէս մտածած են մասնաւորապէս օտարները։

Մոռացութեան տրուած է, անտեսուած է այն դիմադրութիւնը, որ հինէն ի վեր մեր ժողովուրդը յայտնաբերած է Հիւսիսի նկատմամբ։ Ներսէս Աշտարակեցիի օրերէն սկսեալ։ Մեր ներկայ եռտորին մէջ այդ դէպքերն են որ կը ներկայացնենք ժամանակագրական կարգով՝ 1827էն մինչեւ մեր օրերը։

Փոխանակ երկար խորհրդածութիւններու, մեր մտահոգութիւնը եղած է ընթերցողին տալ փաստեր, վկայութիւններ, որպէսզի անմտապաշար կերպով խորհրդածէ եւ յանգի կերակացութիւններու։

Դէպքերը եւ վկայութիւնները շաղկապելու նպատակով տուած ենք բացատրութիւններ, լուսարձակութիւններ։ Այնքան ալ դիրքին չէ ըմբռնել քաղաքական բարդ խաղերը, որոնք կատարուեցան և դեռ պիտի կատարուին մեր հայրենիքին շուրջ։ Հայաստան՝ իր աշխարհագրական դիրքով, հայութիւնը՝ իր անընկճելի նկարագրով բացառիկ տեղ մը զբաւած են Մերձաւոր Արեւելի ռազմական, քաղաքական, դիւմագիտական պատմութեան մէջ։

Վերջին տարիները և՛ Հայաստանի մէջ երատարակուեցան քանի մը տասնեակ մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդի պատմութեան նորագոյն շրջանի մասին, տպացուցանելու համար հայերու հաւատարմութիւնը դէպի ուսումնասիրութիւնը եւ օրվտական կարգերը...

Քարոզչական մեքենան այնքան կատարելագործուած է, որ իշխանութիւնը միշտ պատմութիւնը խորդախելու դերին մէջ է։ Այդ-

պէս պիտի շարունակուի, ինչքան ասան որ տպագրական մեքենայի գործածութիւնը մենաշնորհը կը մնայ կոմունիստներուն, եւ խօսքի ազատութիւնը արգիլուած է հորհրդ. Միութեան սահմաններու մէջ:

Հայրենիքի սէրը կը հարկադրէ մեզ՝ դիմադարձել, բարձրագոյն յայտնել նշարտութիւնը, մերկացնել բռնակալներու սուտը եւ կեղծիքը: Հայաստան եւ Սփիւտք հասարակապէս պէտք ունին անվերապահ, անկաշկանդ, ազատ խօսքի: Ընդհանրապէս կարգաւորողները երբ ի վիճակի են, թող հերքեն այն բազմաթիւ վկայութիւնները, վաստերը, գորս կը ներկայացնենք այս գործին մէջ:

Հիւսիսը - ցարական թէ բոլշեփկեան - միշտ հայերուն նեղակա յացած է իբրեւ «փրկիչ» հարաւի դէմ: Մոռացուցեան տրուած է-հին եւ նոր սերունդներու յաջորդական դիմադրութիւնը ուստի անկախութեան, ձուլումի քաղաքականութեան դէմ: Մանաւանդ անցիտացած ենք այն մեղապարտ մասնակցութիւնը, որ ռուսական իշխանութիւնները ունեցան թրփական հալածանքներու ընթացքին՝ Սուլթան Համիտի ժամանակէն մինչեւ իթթիհատակները եւ քեմալականները:

Որքանիւ այդ գործակցութիւնը մոռացուցեան տալու համար, ամէն ջանք քաջած են քաղաքականապէս վարկաբեկելու հայ գործիչները, հայ յեղափոխականները: Միամիտներուն յաջողած էին հաւատացնել, թէ խորհրդային բռնակալութեան դէմ կռիւը Հայաստանի մէջ խումբ մը «արկածախնդիր»ներու գործն է- իսկ արտատեղմանի մէջ՝ Ահաբաններ, հատիսներ, Ջամալներ, Ռուբեններ, Համաներ, Գրոմեր եւ Խաւատարներ իրենց նախարարական, պետական արտոնքը վերադարձուցանողական շահու եւ փառքի համար կը զբաղարէին հայրենիքի դէմ:

Մեզմէ յաւէտ բաժնուած են Հայ-Դատի այդ այսոյեանները. իսկ երկրի մէջ բոլորովին նոր սերունդ մը մէջտեղ եկած է: Սակայն նորագոյն դէպքեր վկայեցին, թէ հայ ժողովուրդը իր բոլոր գասակարգերով աւելի քան երբէք դէմ է բռնակալութեան: Հայ զանգուածներուն մէջ միտ ու ոսկոր դարձած է անկախութեան գաղափարը:

Բոլշեփկիսի եւ Դաշնակցութեան միջեւ պայքարը պարզապէս մէկ-երեսն է. արտայայտութիւնն է այն մեծ բախումին, որ յարատեւօրէն տեղի-վայնէնայ իրար դանդաճանքս կողմէ: Երկրէն կարկիթ բռնապետութեան. Հոգեբանական սխալ որ պիտի բռնաշեշտը դնել երկու կուսակցութիւններու, երկու հոսանքներու տարակարծութեանց վրայ:

Համաժողովրդական, կամահայեան ընդվզում մըն է պատահածը. վկայ՝ հորէն կաթողիկոսի, կոմկուսի երբեմնի քարտուղար հանգեանի, պրոլետարական գրող Ջարենցի ողջակիզումը: վկայ՝ հո-

լածական հարիւրաւոր մտաւարականները, պետական գործիչները (ցանկը տեսնել այս գրքի վերջաւորութեան)։ վկա՛յ՝ հազարաւոր հայ աւստրականները, որոնք բռնուած են Հայաստանէն դէպի Սիւլեյմանիա։ վկա՛յ՝ այն պատուարը, հաստաւաճումը իւր, որ հաստատուած են Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ։

Հայրենիքի մէջ անտարակոյս կայ շինարար աշխատանք, որուն մէջ մասնակցութիւն չունի Բալչեւիզմը, ան պարզապէս կը դժուարացրնէ մեր ժողովուրդին ինքնայատուկ կենսունակ ոգիի ստեղծագործութիւնը։ Կ'արժէ կարդալ ինքուրեւ մը Լինչի «Հայաստան»-էն (տես այս հատորին մէջ, էջ 96)։ 1897ին, ռուսերու կողմէ Հայաստանի գրաւումէն 70 տարի ետք, Երեւանի բնակչութիւնը 15 հազար հոգի էր, որուն միայն կէսը հայեր էին...

Միատարր Հայաստանը կազմուեցաւ եւ իր մայրաքաղաք Երեւանը 80 հազար բնակիչ ունեցաւ, բացառապէս հայ զէնքի յաջողութեամբ, երբ կործանեցաւ ռուսական կայսրութիւնը եւ փոքր ազգեր գտան իրենց ազատութիւնը։

Այս հատորին մէջ կը ներկայացնենք հայ ազատագրական շարժումը 1827էն 1957, միշտ վաւերագրերու լոյսին տակ, յիշելով հայ եւ օտար ազգիւրներ։ Տարիներու պրպտումներէ ետք կուզանք հաստատելու, որ Հայ Դատի պատմութիւնը դեռ կը մնայ անծանօթ իր շատ մը երեսներով։ Ազատ եւ Անկախ հայ պետութիւնը միայն օր մը պիտի կարողանայ գայն տալ լրիւ կերպով։

Մինչ այդ՝ մենք մեզ բաւարարուած կը զգանք, եթէ յաջողեցանք ընթերցողին ուշադրութիւնը կեդրոնացնել հարցերու վրայ, որոնք այսօր կը կազմեն Հայաստանի եւ Հայ Դատի էութիւնը։

ԱՂԲԻԻՐՆԵՐ

- Վ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ՝ «Ա. Ս. Գրիբոեդովը եւ հայ-ուսական յարաբերութիւնները», 1947, Երևան:
- Ա. Դ. ԵՐԻՑԱՆՑ՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ կողմաբի Հայք 10րդ դարում», 1894, 1895, Ա. եւ Բ. մաս:
- Մ. ՎԵՐԱՆԴԵԱՆ՝ «Հայկական շարժման նախապատմութիւնը», 1912, Ժընև:
- Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ՝ «Ազգայնասուն», Գ. հատոր, Երուսաղէմ, 1927:
- Ն. Յ. Գ. ԼԻՆՉ՝ «Հայաստան», Երկհատոր, թրգ. Լ. Լարենց, Կ. Պոլիս, 1913:
- Գ. ՆՈՐԱՏՈՒՆԵԱՆ՝ «Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman», շորս հատոր, Փարիզ, 1900-1903:
- Խ. ԱՐՈՎԵԱՆ՝ «Երկերի ժողովածոյ», Երևան, Կոթր հատոր, լոյս տեսած է 1948-1957:
- Գ. ՅԱՆՈՐԵԱՆ՝ «Անշուտուր Արովանի Վէրք Հայաստանի վէպի ստեղծագործական պատմութիւնը», 1955, Երևան:
- Մ. ՆԱԻԲԱՆԴԵԱՆ՝ «Ամբողջական Գործեր», շորս հատոր, Երևան, 1945էն 1949:
- ԵՐ. ՇԱՀԱՋԻՉ՝ «Երևան Միքայէլ Նալբանդեանի», 1932, Երևան:
- ՍԱՐՈՒԵԱՆ՝ «Հայկական Ենդերը եւ Ազգ. Սահմանադրութիւնը», Քիֆլիս: Paul Cambon : Correspondance, 1870-1924, Grasset, 1940.
- Է. ԱԿՆՈՒՆԻ՝ «Գովասեան Վէրքեր», Ժընև:
- ՄԵԼԻՍ՝ «ՎԱՐԴԱՊԵՏ՝ Հայերը Ռուսաստանում», Վազարշապատ, 1906:
- ԼԷՕ՝ «Անցեալից», 1925, Քիֆլիս:
- ԼԷՕ՝ «Քիւրքահայ յեղափոխութեան զազափարարանութիւնը», Երկհատոր, 1934, Փարիզ:
- Ա. ՅՈՎՀԵՆՆԷՍԵԱՆԻ ԽՐՄԱԳՐՈՒԹԵԱՄԸ Հայաստանի Անտոնովան եւ Անտանտան», Երևան, 1928:
- ԼԵՆԻՆԻ, ՄԹԱԼԻՆԻ «Մարդկական գործերու հայերէն թարգմանութիւնները»:
- Ս. ՎՐԱՏԵԱՆ՝ «Հայաստանի Հանրապետութիւնը», 1928, Փարիզ:
- Ա. ԿԱՏԻՍԵԱՆ՝ «Հայաստանի Հանրապետութեան ծագումը եւ զարգացումը», 1930, Սթէնբ:
- ՋՕՐ. ԱԼԻ ՃՈՒՍ՝ «Մտեկուս Հաթրալարի» (թուրքերէն), Երկու հատոր, 1965, Պոլիս:
- Ա. ՊԱՐՏԻՋԵԱՆ՝ «Հայ Եկեղեցւոյ տաղնապը եւ անոր պատասխանատուները», 1968, Գոթթըն, էլ 39:
- Ա. ԱՐԵՂԵԱՆ՝ Դաշինքերը «Վէճի» եւ «Յուսարերձի» մէջ:
- Վ. ՆԱՍԱՍՐԴԵԱՆ՝ «Բուլղարիզմը եւ Դաշնակցութիւնը», 1940, Գահիրէ:
- Անդրեակոմ կողմոյս գիրք, Յրանալի արտաքին նախարարութեան հրատարակութիւններ, հայերէն պարբերականներէն «Երուսակ», «Անահիտ», «Հայրենիք» մասագիրի, «Վէճի», «Երբորի» (Երևան) եւ «Յուսարեր» օրաթերթի համալրանները:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

Հ Ա Յ Դ Ա Տ Ը